ԾԻԱԾԱՆ

ԼԻՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Դէպի արևելք... Ահա տեսնում եմ
Ի՛նչպէս մրռայլում է նորա պատկեր.
Այնտեղ ժողովւում և կուտակւում են
Թանձրը, սև թրխպեր։
Արևելք, քո սև հորիզոնի տակ,
Գիտեմ, պատրաստում ես որոտ, կայծակ
Իմ թըշւառ եղբօր, իմ խեղճ մօր համար.
Օ՛հ, բանտի՛ կամար...

Ա՛խ, ինչո՞ւ արդեօք, մինչ արևմուտքում
Ոսկեգոյն արև է փայում գողտրիկ,
Այլայլւած, մրռայլ այն արևելքում
Սպառնում է ճայթել ահեղ փոթորիկ։
Բայց խընդա՛, հոգի՛ս. ահա ամպերում
Կանաչ-կարմիրը կապեց կէս-շըրջան.
Ո՛հ, ինչ քաղցրը յոյս վառւեց իմ սըրտում.
Այն դու վառեցիր, պայծառ ծիածան։

Մոսկւա. 1890 թ., 22 յունիսի։